

## ԿՐՕՆԱԿԱՆ

ԵՐԵՒՈՅԹ ԵՒ ԻՍԿՈՒԹԻՒՆ:

Յ. 2. 1—4.

Միայն իմաստութիւնն տուր ինձ, ամենայն արարածոց ճարտարապետ, միայն իմաստութիւնն տուր. այդ իմաստութիւնը կը տանի ինձ սուրբ հետքով հոգիների սուրբ տաճարը: Տուր ինձ այն շնորհքն, որ խաբէութիւնից ու սխալանքից հեռու մնալով, փրկութեան ետեւից ընկնեմ և ոսկեպէն ճշմարտութեան կճէպից մինչև միջուկը անցկենալով թափանցեմ:

Աստուած գերագոյն իմաստութիւնն է:— Այսպէս ենք լսում, այսպէս ենք կարգում շատ անգամ սուրբ յայտնութեանց մէջ. և մեր կոչումն է իմաստուն լինել աշխարհիս հովտի մէջ ունեցած մեր պանդխտութեան օրերում:

Ի՞նչ է իմաստութեան խելութիւնը:— Ճշմարիտ, բարի և գեղեցիկ բանի պարզ ճանաչումը. հեռանալն ամեն խաբէութիւնից, ամեն ինքնախաբուցութիւնից այն բաների մէջ, որ այս աշխարհիս ու յուստենական կեանքին են վերաբերում:

Իմաստութեան հակառակը յիմարութիւնն է, և յիմարը գատողութիւնն է անում որ և իցէ բանի վերայ՝ ոչ թէ նորա էլ—նէ—նը քննելով, այլ արտաքին էլ—նէ—նէ է շլանում. բանի գրսի կողմին մտիկ տալով, սխալվում է:

Սորա համար ծեր մարդն սովորաբար աւելի իմաստուն է, քան թէ անփորձ պատանին. հասակն առած մայրն աւելի իմաստուն է, քան թէ աշխարհիս անձանթ դուստրն: Տարիքն առնելով, մարդը փորձառութիւններովը շատ բան է սորված լինում, և սխալանքի գալրոցից դուրս եկած լինելով, ճշմարտութիւնը շատ աւելի լաւ է հասկացած լինում և այս ու այն խաբէութիւնիցը յետ դարձած լինում:

Յիմարը գատողութիւնն է անում մարդու արժանաւորութեան վերայ՝ մտիկ տալով նորա հագուստին, նորա ունեցած կարողութեանը, նորա ունեցած պաշտօնին. — բայց իմաստունը գատողու-

Թիւն է անուժ նորա մասին՝ նորա ունեցած մտքերին ու գործերին մտիկ տալով: Յիմարն՝ այն մարդուն է բարեպաշտ քրիստոնեայ համարում, որ ժամից յետ չէ ընկնում, անգիր սորված աղօթքներն ասելու իրան սովորութիւն է արել, շատ անգամ Աստուածաշուքն է կամ ուրիշ հոգեշահ գրեանք է կարդում, և մեծ զուարճութիւններից հեռու մնում, բայց իմաստունն այն մարդուն է բարեպաշտ քրիստոնեայ համարում, որ իւր ամեն մտածմունքների և արած գործերի մէջ շատ մարդասէր է, ամեն տեղ օգնում է, ամենին հասնում, ոչ որի սիրտը չէ ցաւացնում, հենց ասենք թէ՛ Աստուծոյ համար ու Աստուծոյ շնորհաց մէջ ապրում, նորանց պատուներին պիտի ճանաչենք նորանց:

Աստուած գերագոյն իմաստութիւն է. նա է իմանում իսկահան արժէքը՝ թէ՛ կենդանի և թէ՛ անկենդան արարածոց: Նորա առաջը նշանակութիւն չունի որ և իցէ՛ մարդու անունը, համբաւը: Նորա արդարութեան կշիռքի մէջ հաւասարապէս է կշռվում թագաւորական գաւազանն և աղքատ մուրացկանի ցուպը. նորա համար ինչ որ պատահական է, գլխաւոր բան չէ համարվում:

Բայց մահկանացու մարդս երկար ժամանակ պտտում է այս աշխարհիս վերայ խաբէութիւնների մէջ ընկնելով: Արտիճեռու ամեն մի մարդ աշխատում է աւելի լաւ ելել, քան թէ իսկապէս է ինքը: Այս երեւոյթով մէկը խաբում է միւսին: Մենք ըստ մեծի մասին չգիտենք՝ թէ ինչ են մարդիկն, այլ միայն ճանաչում ենք նոցա այնպէս, ինչպէս որ մեզ երևում է: Մենք խոնարհում ենք սխալանքի առաջը՝ փոխանակ ճշմարտութեան առաջը ծուներ դնելու: Մենք նկատում ենք միայն պատահական՝ երկրորդական բաները՝ փոխանակ նորա տակն եղած ճշմարտութիւնը տեսնելու: Մենք կանգնում ենք կրով ծեփած գերեզմանների առաջ, բայց չենք տեսնում նոցա մէջն եղած ոսկորներն ու պղծութիւնը:

Արեմն քրիստոնէական իմաստութեան գլխաւոր կանոնն է և պիտի լինի ամեն մի մարդու համար այս թէ՛ երևոյնն իւր-իւրեց զանազանի բն:

Այս կանոնի մէջն է մաքուր կեանքի բոլոր խելօքութիւնն: Այլ որ կարողանար ամեն տեղ այս կանոնովը գնալ, ամենաիմաստուն մարդը կը լինէր: Սորա համար մեր զաւակների մտքումը պէտք է տպաւորենք այս իմաստութիւնը դեռ իրանց քնքոյշ հասակումն. այս կերպով նորա անդադար ճշմարտութեան ետեւից կընկնեն:

իրանց երազի մէջ չեն համարիլ. երբ որ զարթուն են, ճշմարիտ բազդաւորութիւնն ոչ թէ իրանցից դուրս տեղում կր վնասեն, այլ իրանց սրտի արժանաւորութեան մէջ, և մոլութեան թոյնը՝ թոյն կուտեն, որչափ էլ քաղցր լինի:

Այս կանոնիցը դուրս չգայ ամեն մի մարդ ոչ մի օր՝ եթէ որ ցանկանում է իւր երկնաւոր Հօր զաւակը լինելու: Այս կանոնով միայն գնալով, ազատ և հեռու կը մնայ նա կեանքի հազար ու մէկ փորձանքներից, վշտերից ու հոգսերից, պատճառ որ այս կեանքում մեզ անբազդացնողը միշտ սխալանքն է միայն: Արովհետեւ մենք կեանքի երեւոյթների վերայ ուղիղ կերպով չենք նայում, սխալու ծուռ կերպով ենք ըմբռնում: Մենք ստուերիցը աւելի ենք վախենում, քան թէ իսկական իրից, մենք մեր սիրտը աւելի մաշում ենք այն բանով, որ երազ է, քան թէ այն բանով, որ իրականութիւն է: Մենք ցաւում ենք աւելի մեր երեւկայած, քան թէ՛ մեր ճշմարիտ և յաւիտենական բարւոյ կորստեանը վերայ:

Ել ուրիշ ի՞նչ է քրիստոնէութիւնը, եթէ ոչ միակ ճշմարիտ և իսկական աստուածային իմաստութիւն մարդոց համար: Նորապահանջները կատարելով միայն՝ ստանումէ մարդս փսիւմ շքեղութիւն և ներքին ձեռն-նշխար: Նա երեւոյթից և խարէութիւնից բարձր է կանգնում ու այն անկողն-նշխար հասնում, որ ոչ մի ուրիշ բան նորան տալ չէր կարող: Նա գիտէ՛ թէ ի՞նչ է աշխարհիս բազդաւորութիւնն ու անբազդութիւնը, և ո՞չ մէկը՝ և ոչ միւար կարող են գրկել նորան իւր սրտի հանգստութիւնից: Նա պատահմունքի խաղալիք չէ՝ նա գործ ունի միայն այն բանի հետ, ինչ որ յաւիտենական ճշմարիտ է, յաւիտենական բարի, յաւիտենական երջանկացնող. — նա կախումն ունի միայն իւր Աստուածանից և իւր հօգուոյ յաւիտենական կոչումից: Այսպէսով նա հասունանումէ այն բարեպաշտութեան մէջ, որով ճանաչվումէ Քրիստոսի հետևողը: Նա կեանքի ախորժելի բաները վայելումէ, բայց այդ վայելչութիւնները համարումէ անցաւոր և մարմնաւոր զուարճութիւններ իւր մարմնոյ համար միայն, նա համբերութեամբ տանումէ իւր գլխին եկած ամեն մի անբազդութեան, այն համոզմամբ թէ՛ կատարումէ աստուածային նախախնամութեան խորհուրդը իւր հօգուոյ վրկութեան համար:

Սորա համար էրեւոյնը ինչ-նչից ղեկ է լանալունէն, քեզ նման մարդոց վերայ դատողութիւն արած ժամանակդ: Թէպէտ պէտք

չէ պակաս մնաս այն պատիւը տալուց այլ և այլ վիճակի մէջ եղած մարդոց որ պարտական ես տալու, բայց սրտանց պատուիր ու սիրիր առաքինութիւնն, որտեղ էլ որ գտնես՝ մէկ է, թէ թագաւորական պալատումը թէ աղքատի իրճիթումը: Մտիկ մի տալ մարդու հագուստին՝ ծւմ՝ տղայ լինելուն, ինչ տան զուակ լինելուն, ինչ սերունդից յառաջ եկած լինելուն, ինչ աստիճանի տէր լինելուն, ինչ կարողութիւն ունենալուն, այլ նորա իւր կեանքի մէջ ունեցած արժանաւորութեանը մտիկ տուր: Այ՛ սքին մի դատապարտիր արտաքին երեւոյթին մտիկ տալով, առաջ լաւ խնայիր պատճառը թէ՛ ինչպէ՛ համար նա այդ բանն այդպէս արու: Խօսքերից խաբուելով, մտիկ բարեկամ՝ մի դառնար մի մարդու հետ, որոյ սիրտը չգիտես և որոյ նպատակները քեզ յայանի չեն:

Այսպէս՝ մարդոց հետ ունեցած կենցաղայնարութեանդ մէջ՝ ամեն տեղ պատելով, գտնելով թէ՛ ինչն է ճշմարտան և աշխատելով խարէութեան քօղը պատուել, ինքդ էլ՝ աւելի ուղիղ սրտի տէր մարդ կը դառնաս: Միշտ ուղիղը խօսած ու գործած կլինիս տաանց քաշուելու՝ իրբև պարզախօս ու պատուով մարդ: Քեզ համար զգուելի կլինի մարդոց առաջ աւելի երևելու, քան թէ սրչափ որ ես խոկապէս: Քեզ համար ատելի բան կը լինի ուրիշներին խօսելը քո մասին, և քեզ իսկ այնպէս ցոյց չտալն, ինչպէս որ կաս, այլ միայն կցանկանաս նշանակութիւն և տրժէք ունենալ Աստուծոյ առաջ, որ քո սրտիդ միջինը տեսնու՛մ է:

Երևոյթը ինչո՞ւնից զանազանիք: Այս խօսքերը քո բարերազգութեանդ վահանն են, եթէ որ ուղիղ հասկանաս ու գոցա միտքը ուղիղ կատարես, իսկ ուղիղ հասկանալու համար այդ թանկագին խօսքերը՝ ինքդ քո սրտիդ մէջը մտիր և միտք արա այն օրերի վերայ, որ քեզ անբաղդ էիր հասնորում: Ի՞նչից էր քո դժգոհութեան մեծ մասը: Այն չէր արդեօք, որ դու կարծում էիր թէ՛ աւելի գոհ կը լինէիր, եթէ որ մի ուրիշ զրութեան մէջ լինէիր, կամ թէ՛ եթէ աւելի կարողութիւն ունենայիր, կամ թէ՛ ապագայումը աւելի հոգս անելու բաներ չունենայիր, կամ թէ՛ այս՝ այն ուրախանալու բաներին էլ հասնէիր: Արդեօք մտքումդ չես ասել թէ՛ ինչ կլինէր, որ այս այն մարդոց բաղդաւորութիւնը, կարողութիւնը, հանգամանքը իմն լինէ՛ր, ու ինքդ քո մէջդ չես ցաւիլ, որ դու էլ նորանց պէս չես:

Ա՛խ, իմ սիրելի դժգոհ մարդ, այդպէս մտածած ժամանակդ:

դու երևոյթոյ էիր դատում ու երևոյթն խսկութեան տեղ ընդունում: Այն մարդիքն որոնց սրտումդ նախանձումէիր, շատ կարելի է: աւելի վատ դրութեան մէջ էին, քան թէ դու. ոսկու և մետաքսի տակը շատ անգամ մեծ տխրութիւն է բոյն դնում: Անտարակոյս, դու ասումես քո մէջդ թէ՛ ի՞նչ պատճառ պիտի ունենային այս մարդիկն էլ դժգոհ լինելու: Եթէ որ անբաղդ են՝ իրանց յիմարութիւնիցն է: Այլ. որ այդպէս է, չասե՛մ որ, եթէ քեզ էլ բազմաւորութիւնն ու գոհ սրտով ապրելն է պակաս, ոչ որ մեղաւոր չէ, հէնց քո յիմարութիւնիցն է: Անշուշտ դու էլ լաւ բաներ ունիս, որ ուրիշները չունին և քո ունեցածիդ նախանձում են քեզանից աւելի սպառնալիցութիւն ունեցող հասարակ մարդիկը, որոց ձեռքը չէ հասնում շատ բանի:

Աքանջելի իմաստութեամբ պարզաւել է Աստուած ամեն մի վիճակի, ամեն մի հասակի և ամեն մի օրին իւր ջոկ դուարձութիւնըն ու ջոկ նեղութիւնը: Աւրեմն ոչ ոքի մի նախանձիր, որովհետեւ երևոյթիցն ես խաբւում, և ոչ ոք չէ կարող քեզ երաշխաւորել, որ դու ուրիշ հանգամանաց մէջ աւելի զգալի ցաւերի մէջ ընկնէիր:

Ի՛նչ-՛ի՛նչ էրե՛ն-՛ի՛նչ Բաժանիք՝ երբոր ցանկանումես որեւիցէ բանի, որ կեանքիդ համար ամենացանկալի բանն ես համարում: Զգուշացիր ամենակատարեալ բան համարելու այն ամեն բանը, ինչ որ քո երեւոյթութիւնդ շողումովէ՝ քեզ զիւր գալու կերպով՝ քանի որ չունիս, և քանի որ մեծ բանի տեղ պիտի չըզնես՝ երբոր ունենաս: — Զգուշացիր ոսկու տեղ գնելու այն, ինչ որ թէև լատ ինքեան փայլուն է, բայց չէ կարող քո կեանքիդ ամեն մի ժամը քեզ ուրախութիւն բերել:

Կարելի է, քո միտքդ յափշտակումէ մեծ շահ ունենալ՞ու յոյսը: Ի՞նչ օգուտ պէտք է ունենան քեզ համար մեծ մեծ եկամուտները, երբոր քո ունեցած մեծ կարողութեանդ պատճառով նախանձի ու հալածանքի պէտք է ենթարկուիս, ի՞նչ հանգստութիւն պիտի տան քեզ մետաքսեայ կակուղ բարձերդ, բազկաթուներդ ու նստարաններդ, և փափուկ ու լաւ անկողինքդ, երբ որ հիւանդութեանդ մէջ նորանց վերայ պարկած, ախ ու վախ քաշելով, կեանքդ պիտի մաշուի, ի՞նչ նշանակութիւն պիտի ունենան քեզ համար քո տանդ փայլն ու փառաւորութիւնն, երբ որ քո ամենափրկի մտերիմներիդ վերջին շունչն ու մահը քո սիրտդ տակն

ու վրայ պէտք է անեն: Քո ունեցած կարողութիւնդ արդեօք կարող էր քեզ մխիթարութիւն պարգևել: Քո ունեցած հարստութիւնդ արդէն քեզ մօտեցող մահուան ժամդ կարող էր քաղցրացնել:

Կարելի է մտքովդ յափշտակութեամբ մեծ պատիւների հասնելու յուսով: Ինչո՞ւ ես մտիկ տալիս փայլուն արտաքին կողմին: Մի՞թէ չես իմանում, որ չար մարդիկ ամենից աւելի ատոււմ են նորանց, որոնք որ աշխարհիս մէջ սրելիցէ գերազանցութիւն ունին: Չե՞ս իմանում, որ ստուերը այն տեղ է աւելի թանձր, ուր որ շատ պայծառ լոյսն է ընկնում: Մի՞թէ քեզ յայտնի չէ, որ բարձր արժանաւորութիւնների հետ աւելի շատ անգամ կապուած են ծանր հոգսեր: Մի՞թէ չես հասկացել, որ բարձր և վսեմ գիրք ունեցող մարդիկը, ձանձրանալով աշխարհի համբաւից, շատ անգամ սիրով յետ են քաշվում ու նախանձելի մասնաւոր մարդու կեանք անցկացնում:

Երևոյնք է՝ ինչ-՞նչ և ամենալաւ բան համարիր միայն այն, որ թէև չէ փայլած, բայց քո բարգաւոր կեանք անցկացնելուդ համար աւելի օգտակար է քեզ, ինչ որ միշտ կարող է քեզ սրարգևել ամենամեծ, ամենալաւ և ամենատիրելի հանգստութիւն ու սրտի գոհութիւն, թէ՛ քո բարձր և թէ՛ ստոր գիրքիդ մէջ, թէ՛ քո բոլորովին աւուրջ եղած օրերումդ և թէ՛ քո հիւանդութեան անկողինքիդ մէջ, թէ՛ քո պատանեկութեան ու երիտասարդութեան՝ և թէ՛ քո ծերացած, ուժից ընկած ու հիւանդոտ մեծ հասակիդ մէջ. ինչ որ մանաւանդ կարող է քեզ վստահացնել այն սուրբ վստահութեամբն, որ դու քո ստեղծողիդ, քո Աստուծոյդ աւելի մօտիկ ես: Եւ ի՞նչ են ասում այս վսեմ՝ բարւոյ, այս անհատ մարգարտի անունն, որ մի թագաւորական թագից աւելի գին ունի: Ասում են՝ Քրիստոս է իմաստութիւն, Աստուծոյ թանձանս-ն է՝ մարտի ու լարտի սրտի բարեպաշտութիւն: Այս բարկքը չէ կարող քեզանից խլել կեանքի և ոչ մի փոթորիկ. այս բարկքը պատանեկութեան ծաղիկ հասակի հետ ժամանակով չի թառամիլ. այս բարկքն՝ Աստուծոյ արքայութիւնն է, որոյ մէջ ազնուացած հոգիք են բնակվում, որոյ մէջն իշխում է և կառավարում միայն Աստուած:

Ի՞նչ ոգևորող և աշխարհից ու գերեզմանից բարձր ու վսեմ միտք է այս: Իսկութիւնն ու ճշմարտութիւնն այլ ևս երևոյթ ու

ինքնախտաբուժիւն չեն այտտեղ: Ե՛հարձէս կարող է մարդոյս հոգին: Երբ որ միանգամ այս բարիքը ճանաչել է, էլի հոգս անի ու տանջուի դատարկ ու ստուերական բանի համար: որ հաղիւ ձեռք էր բերուել ու արդէն դարձեալ անհետանում է:

Երեւոյնը է՛կո՛ւնի՛նէն ջնկեր: Ա՛խ, Քրիստոսի իմաստութիւնիցը որչափ հեռու են և որչափ տարբեր կերպով են իրանց կեանքը անցկացնում՝ շատ ու շատ մարդիկ, որոնք որ իրանց քրիստոնեայ են անուանում: Նոքա աշխարհք են գալիս, աշխարհքի համար դատախարակվում, իրանց համար կեանքի ճանապարհ ու վիճակ ընտրում, աշխատում են սյգ ընտրած ճանապարհի, սյգ վիճակի մէջը, իրանց համար ընտրած գործից միայն օգուտ ստանալու վերայ են մտածում, որ սէտք է ունենան. աւելի բարձր մի բան մտքներից անգամ չի անցկենում, ծերանում են. էլ չեն կարողանում վայելիլ, ինչ որ հազար ու մի չարչարանքով ձեռք էին բերել, թողնում են իրանց ժառանգներին ու կեանքի ասպարեզիցը բոլորովին դուրս են գալիս հեռանում, մի վայելչութիւն չտեսած ու աչքները աշխարհին:

Ամենից շատ մարդոց կեանքի պատմութիւնն այս է: Նոքա բան բանի հետ խառնում են, պատահականը՝ ճշմարիտ բանի տեղ են դնում, անցաւորն՝ յաւիտենական բանի տեղ. նոքա երկրաւոր բանի համար են ապրում, իբրև թէ ամենեւին մեռնելու չեն, ու այնպէս են մեռնում, իբրև թէ այս աշխարհիս անցաւոր ու ժամանակաւոր կեանքիցը յետոյ՝ իրանց համար էլ կեանք չկայ:

Եթէ որ մարդս այս աշխարհիս մէջ էլ ուրիշ նպատակ չունի, ու միայն նորա համար է ստեղծուել ու ապրում՝ որ շուտ անց կացող երազի նման և հազար ու մէկ չարչարանքներով լի՝ շատ շատը՝ 70 կամ 80 տարի կեանք ունենայ: — Եթէ որ ապրումէ միայն հարբստութիւն ու տեսակ տեսակ բարիք ձեռք բերելու համար, որ իրանը չեն ու իրան մնալու չեն: — Եթէ որ ապրումէ ոչն ուրախութիւնների համար, որ աւելի շուտով անց են կենում, քան թէ ունեցիլ էինք՝ այսպիսի մի կեանքի համար չէր արժիլ աշխարհք էլ ծնելը: միլիոնաւոր մահկանացու մարդոց համար աւելի լաւ կլինէր, որ աշխարհքումս գանուած էլ չլինէին ամենեւին: Այս քիչ տեւող ու անցաւոր մեր օրերն արդեօք շատ բարձր ու պարզ ձայնով չեն յորդորում մեզ մեր կեանքի ժամերումն և ասում՝ թէ՛ մեր հոգին պէտք է կապուի ամենասերս կապով ճշմարիտ և մնա-

յուն բանի հետ: Աստուծոյ ստեղծած մարգն հոգի է ու յաւիտե-  
նական՝ Աստուծոյ արարածների կարգումն. այս աշխարհքումն  
նա պիտի լաւ ու վատ օրեր քաշելով, լուսի ու ստուերի մէջ լի-  
նելով, զարգանայ ու գէպի իւր կատարելութիւնը գնայ: Այ թէ  
նա պիտի ապրի այն՝ իւր հող զառնալու մարմնին համար, որ  
իւր հոգուըը ջակ է ու պիտի բաժանուի նորանից, այլ իւր անմահ  
ու յաւիտենական հոգուն համար: Իւր էութեանը կողմանէ նա  
մարմնաւոր աշխարհին չէ պատկանում, այլ հոգիների աշխար-  
հին: Քէպի այդ աշխարհն է ձեռքով անում նորան Աստուած,  
գէպի այդ աշխարհն է կանչում նորան Աստուծոյ ձայնն: Ինչո՞ւ  
համար չենք լսում մենք մեր մեծ Առաջնորդի ձայնին:

Լսում եմ Քո ձայնդ, ո՞վ Յիսուս, իմ գերաշխարհի՞կ Աստու-  
ցիցս: Տեսնում եմ սիրով ինձ աչքով անելի, ո՞վ հոգիների Հայր:  
Բարձրանալ, միշտ բարձրանալ գէպի կատարելութիւն՝ գէպի հո-  
գուս պայծառութիւնը պահանջում ես Քու ինձանից: Աշխարհա-  
յիննովը չեմ կոպուիլ, աշխարհային բանի շլթաները կկտորեմ:  
Արչափ որ իմ մարմնովս աշխարհին պէտք է պատկանեմ, աշ-  
խարհինը լինեմ, աշխարհի համար ապրեմ—բայց իմ հոգիս  
գէպի վեր, գէպի Քեզ է ձգտում, Քեզ է փափագում.—հոգիս  
յաւիտենական կեանքի է պատկանում, որ իւր համար արդէն  
սկսած է, պատկանումէ մի յաւիտենական կեանքի, որոյ շարու-  
նակութիւնն է մեր մահուանից յետոյ ունեցած մեր կեանքը. մի  
յաւիտենական կեանքի է պատկանում, որոյ մէջ ամենազնիւն ու  
ամենասուրբը Քեզ ամենամօտ է. մի յաւիտենական կեանքի, որուն  
Քու ինձ նուիրել ես այս աշխարհքս ծնելուցս տուած՝ և որը կա-  
տարելապէս վայելելու համար՝ նախապատրաստուի՞ւմ եմ Քրիս-  
տոսի իմաստութիւննաւին:

Այս իմաստութիւնն այսուհետեւ իշխի իմ հոգուս, որովհետեւ  
Քեզանիցն է:

(Թ. ար. 45.)

Գ. Ե. Ա.